



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՉԱՄԸ

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ

*«Այսօր հրեշտակները երկինքէն իջնելով
աւետիս կու տան մարդոց, խաչեալը յարութիւն առաւ
եւ իր հետ ձեզի յարութիւն տուաւ»
(Շարական)*

Մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Բրիստոսի Ա. Յարութեան տօնը Բրիստոնեայ անհատին համար տարուան ամենէն սուրբ եւ նուիրական օրն է անկասկած: Իսկ եթէ Հայ ժողովուրդին համար Ա. Ծննդեան եւ Ա. Յարութեան տօներուն զուգահեռ օր մը կայ, որ ամենէն նուիրական եւ սրտի մօտիկ օրն է, այն ալ մեր աւելի քան 1.5 միլիոն նահատակներուն ոգեկոչման յիշատակն է, Ապրիլ 24ը:

Արդարեւ, այս տարի, ուշագրաւ եւ խորհրդաւոր դիպուածով մը, պատմական այս երկու օրերը կը զուգադիպին Կիրակի, Ապրիլ 24ին:

Որքան յատկանշական է որ այս տարի մենք՝ հայերս, մեր պատմութեան ամենէն մութ ու տխուր օրերէն մէկը կը յիշատակենք Ա. Յարութեան տօնին օրը: Արդարեւ, ինչպէս որ մարդկութիւնը փրկութեան արժանացաւ եւ վերածնաւ մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիստոսի Ա. Յարութեամբ, նոյնպէս ալ Հայ ժողովուրդը յարութիւն առաւ ու վերածնաւ Ցեղասպանութեան նախճիրէն:

Այս տարի, Ապրիլ 24ին, աննախընթաց զուգադիպութեամբ, հոգեկան ցնծութեամբ կը տօնախմբենք մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիստոսի մահուան վրայ տարած յաղթանակը եւ յաւիտենական կեանքի համար մարդկութեան շնորհած յոյսը: Նոյն ատեն, սակայն, կ'ոգեկոչենք մեր 1.5 միլիոն նահատակներուն յիշատակը՝ Հայ ժողովուրդին Ցեղասպանութիւնը եւ միաժամանակ վերածնունդը:

Մեր Տիրոջ եւ Փրկչին Ա. Յարութիւնը մեզի կը շնորհէ մարդկային պատմութեան ամենէն հզօր ներշնչումի աղբիւրը: Արդարեւ, Ա. Յարութեան պատգամը նշանակալից եւ գեղեցիկ է, որովհետեւ մեզի կը հաւաստիացնէ, թէ Տէրը իշխանութիւն ունի նոյնիսկ մահուան վրայ, եւ թէ՛ Աստուծոյ համար մահը պարզապէս առաւել կեանքի առաջնորդող հանգրուան մըն է:

Իր մահէն առաջ, մեր Տէրը՝ Յիսուս Բրիստոս յաւիտենական կեանքի խոստումը տուաւ բոլոր անոնց, որոնք կ'աշակերտին ու կը հետեւին իրեն:

«Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թապէտեւ մեռնի՛ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի» (Յովհ. 11:25-26): Եթէ մեր Փրկչին երկրաւոր կեանքի առաքելութիւնը աւարտեր իր մահով, Ինքն ալ կը դառնար մահկանացու կրօնական առաջանորդներէն մէկը: Սակայն իրողութիւնը այն է, որ Յիսուս խաչուեցաւ, թաղուեցաւ եւ երեք օրեր ետք մեռելներէն յարութիւն առաւ, մահուան վրայ յաղթանակ տանելով՝ ինքն կեանքի՝ յաւիտենական կեանքի յոյսը պարգեւեց մեզի: **«Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն, իր մահով մահը նուաճեց, եւ իր յարութեամբ մեզի կեանք պարգեւեց: Անոր փառք յաւիտեան: Ամէն»** (Ժամամուտ): Զեւեարար, Ս. Յարութեան շնորհիւ, մենք կը վերածնինք, մահէն դէպի կեանք կ'անցնինք:

Աւագ Զինգշաբթիով ու Աւագ Ուրբաթով պատկերաւորուած մեր Փրկչին չարչարանքներուն, խաչելութեան ու թաղման յուզումնալից պահերէն ետք, Ս. Չատկուան առաւօտուն, մեր Տիրոջ սիրոյն եւ թողութեան դէմ յանդիման կը գտնուինք, եւ կը գիտակցինք որ մեր կեանքերը պէտք է պայծառակերպուին ու յարութեան շունչով առաջնորդուին յաղթական երթով:

Մեր Տերը՝ Յիսուս Քրիստոս, մեռելներէն յարութիւն առաւ, որպէսզի իր օրինակով մենք եւս յարութիւն առնենք: **«Թող օրհնեալ ըլլայ Աստուած, Յիսուս Քրիստոսի Զայրը, որ իր անսպառ շնորհներով մեզի պարգեւած է կեանքի յոյսը՝ Յիսուս Քրիստոսի Ս. Յարութեամբ»** (Ա. Պետր. 1:3): Մեր յոյսը կ'ամրապնդուի վերստին ծնունդով, որ կ'իրականանայ Ս. Յարութեան յաղթանակով:

Արդարեւ, երբ հոգեպէս սպառազինուած ենք Ս. Յարութեան կենսատու պատգամով, ալ ոչ մէկ բանէ վախնալու պատճառ ունինք, որովհետեւ գիտենք՝ ցաւն ու մահը չեն կրնար զգետնել մեզ ու յաղթել մեզի: **«Մահը կլանուեցաւ. յաղթանակը շահուեցաւ: Ո՛ւր է, Մահ, յաղթանակդ. ո՛ւր է, Մահ, քու խայթոցդ»** (Ա. Կորնթ. 15:54-55):

Մահէն ետք կան վերածնունդ ու ինքն կեանք, եւ այս ճշմարտութեան վկան է Զայ ժողովուրդը:

Քրիստոնէական մեր հաւատքի ճանապարհին, բազմաթիւ փորձեր եղած են մեզմէ խլելու մեր հաւատքը: Այսուհանդերձ, մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի հանդէպ մեր հաւատքն ու վստահութիւնը ապահոված են մեր գոյատեւումը: Շատեր փորձած են ջարդել մեզ ու դուրս ձգել պատմութեան էջերէն, սակայն մեր հաւատքը մեզի ընձեռած է զրահը՝ պաշտպանելու մենք զմեզ եւ մեր իրաւունքները: Իբրեւ ազգ, բազմիցս վերականգնած ենք ողբերգութեանց մոխիրներէն եւ վերածնած ենք դարձեալ: Մահը չէ յաջողած զգետնել մեզ: Աւելի քան 1700 տարիներ առաջ, մեր Զայրերը յարուցեալ Քրիստոսը ընդունած են իբրեւ Տեր ու Փրկիչ: Անոնք իրենց հաւատքը հաստատած են ամուր հիմքերու վրայ, Ս. Յարութեան ճշմարտութեան վրայ: Դարեր շարունակ, անոնք հաւատարիմ մնացին մեր ազգի գոյատեւման նոյն հաւատքին: Զրաշափառ Ս. Յարութեան հրաշալիքը կերպարանափոխեց մեր ժողովուրդին կեանքը, որովհետեւ մեր նախնիները ո՛չ միայն ընդունեցին զայն, այլեւ կենսագործեցին հաւատքով ու գործերով: Զայ ժողովուրդը Ս. Յարութեան բերած խոստումը իրացուցած է իբրեւ ազգային արժէք ու անանդ, յաջողած է յաղթահարել բազում փորձութիւններ

ու վտանգներ, որովհետև գրահուած ենք Ս. Յարութեան կենսատու ոգիով: Ենթարկուած ենք բազմաթիւ փորձութիւններու եւ մարտահրաւերներու, բայց երբեք տեղի չենք տուած ու ամօրէն պաշտպանած ենք մեր հաւատքն ու ժողովուրդին գոյատեւումը:

Հայկական Յեղասպանութեան 96րդ տարեդարձի ոգեկոչման առիթով, իբրև զաւակները յարուցեալ ժողովուրդի մը, կ'ուխտենք յարգել յիշատակը մեր նահատակներուն, որոնք քալեցին խաչին ճանապարհով, ու վկաները եղան Հայ Գողգոթային: Նաեւ կ'ուխտենք, որ հայութիւնը բնորոշող վերապրումի ոգին երբեք պիտի չմեռնի:

Ինչպէս որ մեր Տիրոջ՝ Յիսուս Ըրիստոսի Ս. Յարութիւնը մահուան վրայ յաղթանակն է ու նոր կեանքի մը արշալոյսը, միաժամանակ վերահաստատումն է այն ճշմարտութեան, թէ բարի կամքը կը յաղթանակէ չարիքին, եւ աղբիւրն է անսպառ յոյսի: Նոյն յոյսով կ'ապրի նաեւ մեր ժողովուրդը, որ իր կեանքի փորձով կենսաւորած է վերածնունդը, վերանորոգութիւնը. հետեւաբար, Ս. Յարութեան տօնի վերակենսաւորող պատգամը այսօր ալ կ'ապրի մեր ժողովուրդին մէջ:

Մեր պատմութիւնը փաստած է, որ ինչ պարագաներու առջեւ ալ գտնուինք, իբր յարուցեալ ազգի զաւակներ, մեր հաւատքը պիտի մնայ անխախտ, կործանման մոխիրներէն յարութիւն պիտի առնենք եւ ամեն անգամ յաղթական դուրս պիտի գանք: Մեր Տէրը՝ Յիսուս Ըրիստոս, մահը պարտութեան մատնելով, մեզի տուաւ յոյսը՝ անյուսութեան պահերուն, խաղաղութիւնը՝ փոթորկոտ օրերուն:

Ս. Յարութեան տօնի առթած ապրումներով, գոհութիւն ու փառք տանք Ամենակալին, որ մեզի շնորհած է այս սքանչելի պարգեւը: Երբ ցնծութեան պահեր կ'ապրինք Ս. Յարութեան տօնին, աղօթենք, որ Ան վերանորոգէ մեր հոգիները, ամրացնէ մեր հաւատքը, եւ մեզի շնորհէ քաջութիւն ու կենսունակութիւն՝ մեր ազգը առաջնորդելով դէպի արդարութիւն եւ մեր իրաւունքներուն վերատիրացում: Աղօթենք, որ Ան խաղաղութիւն շնորհէ մեր սիրելի նահատակներուն, որոնք իրենց կեանքը զոհաբերեցին հաւատքի ու ազգութեան համար, եւ անոնց հոգիները արժանի դարձնէ իր Արքայութեան երանական կեանքին:

Ս. Յարութեան հրաշափառ տօնին ու մեր նահատակաց ուխտի վերանորոգման այս օրին, հայրական սիրով ու բարեմաղթութիւններով կ'ողջունենք մեր հոգեւոր եղբայրները, Ազգային Վարչութիւնը, Ազգային Երեսփոխանները, ծխական շրջաններու հոգաբարձութիւնները, դպրոցներն ու նուիրեալ դաստիարակները, մեր հաւատացեալ ժողովուրդը ամբողջ: Կ'աղօթենք, որ յարուցեալ Փրկչին փառքը մեզի բերէ նոր կեանք ու յոյս, անհատաբար եւ ազգովին:

Թող Ս. Յարութեան հրաշքն ու խոստումները, զատկական այս օրուան առիթով, մեր սիրտերը լեցնեն անսպառ ցնծութեամբ, ու միասնաբար գոչենք՝

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ
ՕՐՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԸՐԻՍՏՈՍԻ**

Աղթարար՝

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի

Ս. Յարութիւն, 2011

PRELATE'S EASTER MESSAGE

THE RESURRECTION IS OUR REBIRTH

“Today the angels are descending from heaven; they give the good news to mankind announcing that the crucified Jesus is risen from the dead, and with Him arose you all.” (Hymn).

If there is one day of the year that is holiest to Christians, it is Easter Sunday. And if there is one day of the year next to Christmas and Easter that the Armenian people hold dearest to their hearts, it is April 24, the day the Armenian Genocide of 1915-1923 is commemorated.

This year, in a startling irony, these two significant dates in history fall on the same day: Sunday, April 24.

It is fitting that we, the Armenian people, are commemorating one of the darkest days of our modern history on Easter Sunday, for just as mankind was redeemed and reborn by the Glorious Resurrection of our Lord Jesus Christ, so were the Armenian people resurrected and reborn from the ashes of the Genocide.

On this April 24, we are concurrently celebrating with great joy Jesus Christ's victory over death and mankind's hope for eternal life, and somberly commemorating the memory of our over 1.5 million martyrs and the rebirth of our nation.

The Resurrection of Christ provides the most powerful source of inspiration in the history of mankind. The Easter message is a truly remarkable and beautiful one, telling us that the Lord has power even over death, and that from God's perspective death simply means the continuation of life on a higher lever. It is a timeless and evocative message of salvation, hope, spiritual rebirth, personal renewal, rejuvenation and revival.

Before His death, our Lord Jesus Christ had promised eternal life to those who followed Him. ***“I am the resurrection and the life. He who believes in Me, though he may die, he shall live. And whoever lives and believes in Me shall never die.” (John 11:25-26).*** If the story ended at His death, Jesus would be like any other mortal religious leader. But the fact that He rose on the third day and conquered death, he gave us hope of rebirth and of eternal life. Through the Resurrection, we are reborn, and we too can pass from death to life. ***“Christ is risen from the dead. He conquered death by death and with His Resurrection He granted life to us. Glory be to Him forever. Amen.”*** We die

time and time again in sin, only to rise again in the forgiveness of our Lord. Through the dying of the old self, the resurrection of the new man is accomplished. Our daily pain and struggle against sin brings us closer to a new life.

After the pain of Maundy Thursday and Good Friday, we find the love and forgiveness of our Lord on Easter Sunday and are reminded that our lives must be that of transformation and resurrection.

Through the Resurrection we are born anew, we are changed, we are blessed and filled with the grace of God and the Holy Spirit. Christ rose from the dead so that we might also rise from the dead. ***"Blessed be the God and Father of our Lord Jesus Christ, who according to His abundant mercy has begotten us again to a living hope through the Resurrection of Jesus Christ from the dead" (1 Peter 1:3).*** Our hope arises from being born anew, and this new birth comes through the Resurrection of Christ. When we are spiritually armed with the life-giving message of the Resurrection, we truly have nothing to fear for we know that pain and death will not win in the end. ***"Death is swallowed up in victory. O Death, where is your sting? O Hades, where is your victory?" (1 Corinthians 15-54-55)***

There is new life and rebirth after death, and this is something that the Armenian people know well.

Since the beginning of our Christian journey, there have been countless attempts to take our faith away. But always, our steadfast faith in our Lord Savior Jesus Christ sustained us. Many tried to repeatedly massacre us and obliterate us from the pages of history, but our faith gave us the strength to defend ourselves and our rights. Time and time again we, as a nation, rose from the ashes of tragedy and were born anew. Death could not keep us down. More than 1,700 years ago, our forefathers received the Resurrected Christ as their Lord and Savior, founded their faith on an unshakeable foundation, the Truth of the Resurrection, and remained true to their faith always for the salvation of our nation. The miracle and the marvel of the Glorious Resurrection changed the life of our people because our ancestors not only perceived it, but lived it through their faith and deeds, thus renewing the life and spirit of the Armenian people and nation. The Armenian people embraced the promises set forth by the Resurrection of Christ as national values and ideals, and have survived and thrived amid great adversity because we are armed and fortified by the spirit of the Resurrection. We have had our fair share of trials and tribulations, but we have never shirked from challenges in defense of our faith and people.

As we commemorate the 96th anniversary of the Armenian Genocide, as children of a resurrected nation we pledge to honor the memory of our martyrs who walked the path of the cross and witnessed the Armenian Golgotha and vow that the spirit of survival that is so characteristic of the Armenian people will never die.

The Resurrection of our Lord Jesus Christ is the conquering of death and the dawn of a new life, the assurance that good will triumph over evil and hope will abound. The Armenian people have experienced rebirth and renewal and

the transformative and enlivening message of Easter continues to resonate throughout our nation. As our history has proven, no matter what may come before us, the Armenian people, unshaken in our faith, will be resurrected from the ashes of destruction and will be reborn stronger each time. As the Resurrection of our Lord is the ultimate triumph of good over evil, of life over death, the Armenian people too, will triumph over evil.

Our Lord Jesus Christ conquered death and gave us the message of hope in times of despair and peace in times of conflict. He gave us the promise of redemption and salvation, and of a new life. During our Easter celebrations, let us give thanks and praise to Almighty God for granting us this glorious gift. As we rejoice in the Resurrection of our Lord, let us pray for Him to restore and renew our spirits, embolden our faith, and grant us courage and vigor as He leads our path as a nation to justice. And may He grant peace to the souls of our beloved martyrs who gave their lives for love of faith and love of nation, and make them worthy of His eternal Kingdom.

On this holiest of days, we extend our paternal love and well wishes to our clergy, Executive Council, Parishes' Delegates and Boards of Trustees, schools and educators, sister organizations, and our faithful parishioners, praying that the glory of the Risen Christ bring new life and new hope for us individually and as a nation.

May the miracle and promises of the Resurrection fill our hearts with everlasting joy on this blessed Easter as we proclaim;

***CHRIST IS RISEN FROM THE DEAD
BLESSED IS THE RESURRECTION OF CHRIST***

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian
Prelate, Western United States

Easter, 2011